ՎԱԶԳԵՆ ՏԱԼԻՍԱՆ

ՍՈՆԻԿԻ ԹՌԻՉՔԸ

891.99 մ
Տ-13

ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ 1939

891.99 Մ
13250
8 + 3 SEP 2013
2011-07

Սոնիկի քույրը ընկեր Լենան
Ողաչու յեր շատ արի.
Նրա հետ եր փոքրիկ Սոնան
Ողում շրջել այն տարի։

Մի որ ելի Սոնան խնդրեց,
Քույրը մերժեց ու թռավ։
Որը մթնեց։ Սոնան քնեց
Ու յերազում նա տեսավ.

Սավառնակը պոկվեց գետնից,
Սուրաց, հասավ ամպերին,
Սոնան ուրախ նայեց վերից՝
Վոնց խաղալիք տներին։

ՀՍՍՀ Գրականության և արվեստի պետական հրատարակչություն
Ա. Մռավյան
3701
39

Ահա իրենց տունը հսկա.
Ինչքան փոքր է յերևում...
Լուցկու տուփի չափ էլ չկա...
Զան, ինչ լավ է վերևում։

Գործարանները, հեռու գյուղեր,
Գետը՝ արծաթ գոտու պես,
Յերկաթգիծը ու շատ ճյուղեր,
Մարդիկ փոքրիկ՝ մրջնի կես։

Սավառնակի հետ, շատ մոտիկ,
Ծիտիկներն են, տես, թռչում.
— Ըհը՝, ըհը՝, սրանց մտիկ,
Մի տես ո՞ւմ հետ են մրցում։



3601
39

— Զան, ի՜նչ լավ է բարձր թռչել,
Ամբողջ աշխարհը տեսա·
Ոդաչու յեմ ուզում լինել...
Ահա, արևին հասա։

Սավառնակը անցավ ծովեր,
Անցավ դաշտեր ու լեռներ,
Թռավ բարձր ամպերից վեր,
Առած ծանր շատ բեռներ։

Հետո նետից էլ շատ արագ
Սուրաց դեպի դաշտը հարթ...
— Ի՜նչ լայնացավ գետը բարակ,
Ի՜նչ մեծացան տուն ու մարդ։



Հենց անիվները առան գետնին,
Սոնան քնից վեր թռավ,
Նայեց ժպտուն վառ արևին
Ու շատ բարձր լաց յեղավ։

Մայրը յեկավ ու հարցրեց.
— Լաց ես լինում, ամոթ քեզ...
— Սավառնակից քեզ ով վերցրեց,
Ողաչու յեմ դառնում յես...

Սոնիկն այժմ սավառնորդ ե.
Նավամբի-պետ ե նա,
Ոդում ճարպիկ մի լողորդ ե,
Պողպատաթև ու անահ։



Նա թռչում է շատ, շատ բարձր,
Շուռ-մուռ գալիս, պտտվում,
Գիշեր լինի, մշուշ թանձր,
Չի՛ վախենում, չի՛ պահվում։

ՀՀ Ազգային գրադարան
NL0400878

400
13250.

ԳԻՆԸ 70 ԿՈՊ.

Պատ. խմբագիր՝ Հ. Հայրապետյան
Նկարները և տեխ. խմբագրությունը՝ Ան. Գասպարյանի
Լիտոգրաֆիայի նկարիչ՝ Ս. Գասպարյան
Սրբագրիչ՝ Ս. Փարսադանյան

В. ТАЛЯН

ПОЛЕТ СОНИКА

Гиз. Арм. ССР, Ереван, 1939 г.

Գլավիտի լիազոր՝ Վ—2012. Հրատ. 4905.
Պատվեր 452. Տիրաժ 3000.
Հանձնված է արտադրության 6 մայիսի 1939 թ.
Ստորագրված է տպագրության համար 15 հունիսի 1939 թ.

Պետհրատի I տպարան, Երևան, Լենինի, 65.